

Ա. ՊՈՒՏԵՎԻՆ

ԿՈՍՉ ԶԿՆԻԿԻ ՀԵՐԱՐԴ



891.716
մ-97

ԲՈԼԵՅԵՎԻԿ
1937

2011-05

891.710.48 · Ա. ՊՈՒՏԻԿԻՆ
Պ-97


ՎՈՍԿԵ ԶԿՆԻԿԻ
ՀԵՔՑԱԹԸ

ԹԱՐԳՄ. Դ. ԱՂԱՅԱՆԻ

ՈՌԱՇՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ „ԲՈԼՇԵՎԻԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ - ՌՈՍՏՈՎ ԴՕՆ. 1937

23 JUL 2013

1072




1

Մի ծերուկ ձինորս և իր պառավ կին
Բնակում եյին Մեծ ծովի ափին.
Ծերը գնում եր ձուկ բռնում ծովից,
Պառավն ել տանը թել մանում բրդից.
Այսպես սիասին մի հին գետնատան
Յերեսուներեք տարի ապրեցան։
Ահա մեկ որ ել ծերը գնաց ծով,
Վոր ձուկը վորսա իր մաշված ցանցով.
Նա ուրախ·ուրախ ցանցը ծով ձգեց,
Առաջին անգամ միայն տիղմ հանեց.
Յերկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,
Ցանցը դուրս յեկավ ծովային խոտով.
Իսկ յերրորդ անգամ վոր ցանցը ձգեց, —
Ո՞վ կարե ասել, թե ի՞նչ դուրս հանեց. —
Նա բերավ իր հետ մի վոսկե ձկնիկ՝
Զկանց արքայի գուստրը գեղեցիկ. —
Ծերի ցանցն ընկավ, իրրե խեղճ գերի,
Վոսկե աղջիկը ձուկ թագավորի։
Խեղճ վոսկե ձկնիկ. ինչպես ե խնդրում.



3511
41



Մարդկային յեղվով ծերին աղաչում.
«Թող ինձ, թող, ծերուկ, թող ինձ անվտանգ,
Քնզ կը վճարեմ թանկագին փրկանք.
Ի՞նչ սիրուդ ուզի, ի՞նչ վոր կամենաս,
Ուղիղն եմ ասում, ինձնից կը տանասառ:
Վախեցավ ծերը. մնաց զարմացած,
Նա այնքան տարի ձկնորս եր յեղած,
Բայց ձկան մասին յերբեք չեր լսել,
Թե նա մարդու պիս կարող ե խոսել:
«Գնա, տեր ընդ քեզ, ասաց ծերունին,
Ինձ հարկավոր չե փրկանք թանկագին.
Գնա քեզ համար դու ծիրանի ծով,
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»:

2

Այս դեպքից հետո ծերը տուն դարձավ,
Պատմեց պառավին, թե ինչ բան տեսավ.
«Այսոր յես ծովից, գիտեմ ինչ, ա կնիկ,
Բանեցի հանկարծ մի վոսկե ձկնիկ.

Վոսկե յեմ ասում և վոչ քու գիտցած,
Այսպիսի հըաշք վոչով չի տեսած:
Նա խոսել գիտեր ուղիղ մեր լեզվով,
Աղաչանք արագ, վոր հետ ձգեմ ծով.
«Թող, ասաց, խնդրեմ, թող ինձ անվտանգ,
Քեզ կը վճարեմ թանկագին փրկանք».
Բայց յես վոչ մի բան չըպահանջեցի,
«Վոչինչ չեմ ուզում, գնա, ասացի,
Գնա քեզ համար դու ծիրանի ծով
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»...

Պառավը յերբ վոր այս բանը լսեց,
Խեղճ ալեվորին շատ հանդիմանեց,
Թե ինչու ձկնից փրկանք չի ուզել
Ու այնպես ձրի հետ ծովն ե ձըգել:
«Այս հիմար, անմիտ,—հայ հոյեց ծերին,
Գոնե կասեյիր դու վոսկե ձըկին՝
Մի նոր տաշտակ տուր տանես իմ կնկան,
Մերը կոտրած ե, ել չե պետքական»...

Դարձավ ծերունին ծովի ափ զնաց.
(Տեսավ նա ծովը մեղմիկ ծածանված).


Հսկսեց կանչել վոսկե ձկնիկին.
Չուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինես, թագուհի. Ձկնիկ,
Ինձ նախատում ե իմ պառավ կնիկ,
Հանգիստ չի թողնում խեղճ ալեվորիս,
Վըրաս մըրթմըրթում, ուշունց ե տալիս,
Մի նոր տաշտակ ե հարկավոր իրան,
Մերը կոտրած ե, ել չե պետքական»...

Վոսկե ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա, տեր ընդ քեզ, մի տիրիլ, ասաց.
Թող քու պառավը շատ շընեղանա,
Այսոր նա մի նոր տաշտակ կունենա»...


3

Հետ դարձավ ծերը դեպի յուր տնակ,
Տեսավ կնկա մոտ մի սիրուն տաշտակ.
Բայց կինը գոհ չեր. նա այս անգամ ել

Հսկսեց ծերին սաստիկ նախատել.
 «Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,
 ինչու մի ուրիշ բան չըխնդրեցիր.
 Ել մի ուշանար, շուտով հետ դարձիր,
 Յեկ վոսկէ ձկնից մի լավ տուն ուզիր»:
 Ծերունին դարձավ ծովի ափ գնաց.
 (Այս անգամ տեսավ ծովը պղտորված).
 Հսկսեց կանչել վոսկե ձկնիկին.
 Չուկը լողալով մոտեցավ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
 Ծերը զլուխ տվավ ու պատասխանեց.
 «Վողորմած լինես, Թագուհի Ձկնիկ,
 ինձ շատ նախատեց իմ պառավ կնիկ。
 Գնացիր, ասում ե, տաշտակ ուզեցիր,
 ինչու մեկ սիրուն տուն չըխնդրեցիր»:
 Վոսկե ձկնիկը ծերունուն խղճաց.
 «Գնա, տեր ընդ քեզ, մի տիրիլ, աւաց.
 Թող լինի ախպես, ինչպես կամենաք,
 Այսոր նա մեկ լավ տուն ել կունենա»:
 Ծերը հետ դարձավ կրկին դեպի տուն.
 Ե, նա չըգտավ իր հին գետնատուն.
 Մի նոր տուն տեսավ լուսամուտներով,
 Կրտուրից հանած ծըխահաններով,
 Պատ ու վառարան մաքուր սըվաղած,
 Կրով ու կաֆճով սիպտակացըրած—
 Վարպետի տաշած, կաղնի տախտակից,
 Մեծ դուռն եր կախած լայն բակի կողմից:
 Պատուհանի տակ կինն ուռած նստել,
 Իր չարությունիցն ուզում ե տրաքեր:
 Ի՞նչ անեծք ասես աշխարհիս տակին՝
 Բոլորն ել թափեց խեղճ մարդի զիխին.
 Վերջը, յերբ փոքր ինչ բարկությունն իջավ,
 Մոռութը կախած՝ ծերունուն դարձավ.
 «Անշնորք ծերուկ, անակ ուզեցիր,
 Յերին քո մեջ մեծ բան կարծեցիր.
 Հետ դարձիր, անխելք, հետ դարձիր գնա,
 Վոսկե ձկնիկին իմ կողմից ասա,
 Վոր ել չեմ ուզում մնալ գեղջկուհի
 Ուզում եմ լինել մեծ իշխանուհի...»



Ծերունին դարձլալ ծովի ափ գնաց,
 (Այս անգամ տեսավ ծովը վրդովլած)
 Ըսկսեց կանչել վուկե ձրկնիկին.
 Չուկը լողալով մոտեցավ ծերին.
 «Ի՞ւչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
 Ծերը զլուխ տվավ ու պատասխանեց.
 և Վողորմած լինիս, Թագուհի. Զկնիկ,
 Հանգիստ չի տալիս ինձ իմ չար կնիկ,
 Ել չի կամենում մնալ գեղջկուհի,
 Ու զում ե լինել մեծ իշխանուհի.
 Չրգիտեմ զլուեն ինչ քամի մտավ,
 Վոր գեղջկությունից հանկարծ ձանձրացավ...
 Վասկե ձկնիկը ծերունուն խղճաց.
 «Գնա, տեր ընդ քեզ, մի տիրիլ, ասաց.
 Թող քու պառավը հենց այս որվանից
 Ագատ համարվի իր գեղջկությունից»...
 Հիտ դարձավ ծերը և ինչ ե տեսնում.
 (Կարծեց ցնորք ե աշքին յերեվում)
 Մի տուն հոյակապ. վերնասրահում
 Պառավին ե կանգնած ինչպես նոր խանում.
 Հագին սամուրե բաճկոնակ սիրուն,
 Դիխին դիպակե չարդաթ գույնը զույնը զույն,
 Վիզը զարդարած մարգարիտներով,
 Մատներին մատնիք անգին քարերով,
 Մաշիկներն ինչպես կաս կարմիր վորդան,
 Մյուս հագուստներն ել մետաքս պատվական:
 Ծառաներ ունի մի քանի տասնյակ,
 Բոլորն ել իրան հրու. հպատակ:
 Մարդին վոր տեսավ, պառավը կատղեց,
 Խեղճ ծառաներին ծեծել ըսկսեց.
 (Կարծում եր խեղճը, վոր իշխանուհին
 Պետք ե վոր ծեծե իր ծառաներին).
 Հայոյանք թափեց ամենքի վրա,
 Տեղի անտեղի քոթկեց անխնա.
 Մեկի մազերից բռնեց քաշքըշեց,
 Մյուսին ել մի լավ ապտակներ զարկեց:
 Ծերը մոտեցավ դող-դող քայլերով,
 Ասց պառավին՝ խոր զլուխ տալով. —



«Բարով գերազնիվ խանում խաթունիս,
Հիմա խոմ գի՞ ես, հանգիստ կը ինիս...
Պառավ տիկինը այնպես բղավեց,
Վոր խեղճ ծերունու լեղին պատառեց.
Նորան հրամայեց, վոր խսկույն գնա
Գոմն ավե, քերե ու այնտեղ մնա:

5

Մեկ-յերկու շաբաթ հաղիվ անցկացավ,
Պառավ խանումը նորից կատղեցավ.
«Շուտ կանես կերթաս, ասում ե մարդին՝
Ու իմ կողմանե կասես ձկնիկին,
Վոր ել չեմ ուզում տիկնություն անել,
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...
Այս խոսքի վըրա ծերունին սոսկաց,
Ենք աղաչելով պառավին ասաց.
«Գժվել ես, ա կնիկ, յես չեմ հասկանում,
Արդյոք դու գիտե՞ս ինչ ես ցանկանում.
Մեկ նայիր վըրադ, շենք ու շնորհիդ,
Լրբլբան լեզվիդ, ծուռումուռ քայլքիդ,
Ախըր ի՞նչ ունիս թագուհու վայել,
Վոր խելքիդ այդպես քամի յե փշել.
Արի լսիր ինձ, մի անիլ այդպես,
Ամբողջ աշխարհին կըծիծաղեցնես»...
Ել շըհամբերեց մեր պառավ տատը,
Վոր վերջացըներ մարդն իր խրատը.
Նա այնպես գոռաց, այնպես վորոտաց,
Վոր ամբողջ տունը հիմնովին թնդաց.
«Ի՞նչպես թե այդպես, հանդուժն ըստահակ»,
Դոչեց ու զարկեց մի ուժգին ապատկ,
«Համարձակվում ես, գոեհիկ անգետ,
Վիճել վիհազըն իշխանունու հետ.
Քեզ հրամայում են պատվավոր խոսքով,
Վոր իսկույն գնաս քու. հոժար կամքով,
Յեթե վոչ՝ ահա ժողովված կշտիդ,
Սրանք կըտանեն՝ խփելով վզիդ»:
Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց.
(Այս անգամ տեսավ ծովը սելացած).
Հակասեց կանչել վոսկե ձկնիկին,

Զուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինես, թագուհի Ձկնիկ,
Ելի յե կովում իմ պառավ կնիկ.
Ներիր ինձ, ինդրեմ, յես ամաչում եմ,
Վոր չար պառավիս նոր ուզածն ասեմ.
Բայց վոր ջուրն ընկնիմ, հանգիստ չի թողնում,
Կրակն ե զցել, այրում, խորովում.
«Գնա, ասում ե,— ախ, նզովյալ կին—
Շնուտ գնա ասա վոսկե ձկնիկին,
Վոր ել չեմ ուզում տիկնություն անել,
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...
Վոսկե ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա, տեր լնդ քեզ, մի տիրիլ, ասաց
Թող քո պառավի ուզածը լինի,
Թող գնա դառնա ազատ թագուհի»:

6

Ո՞վ կարե պատմել, թե ծերն ինչ տեսավ,
Յերբ ձկան մոտից տուն վերադարձավ.
Ել ի՞նչ տուն, ի՞նչ բան, դու արքայական
Ապարանք ասա, կամ հսկայական
Մեծ-մեծ պալատներ շարիշար կանգնած,
Բարձր բուրգերով չորս կողմը պատած.
Շքեղ դահլիճներ, անթիվ սենյակներ,
Մարդ կըշշկվեր, յեթե մեջն ընկներ:
Ծերը բարձրացավ մարմար սանդուիքով,
Մի դահլիճ մտավ խիստ պատկառանքով.
Առջեվը բացվեց մի նոր տեսարան,
Յերբ այնտեղ գտավ իր պառավ կնկան.
Նա հիմա ազատ թագուհի դառած.
Առոք ու փառոք ճաշի յե նստած.
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բեգեր,
Վոտի յեն կանգնած՝ վորպես ծառաներ,
Թագուհու համար վինի յեն ածում
Ենք ահուզողով աչք ունքին նայում.
Ծեմքում կանգնել են ահեղ զինվորներ,
Ուսերին բռնած կացնածե սրեր.

Մենակ պառավմ եր սեղանին բազմել,
 Ո՞վ կը հանդգներ նրա հետ նստել.
 Բայց կերակուրներն այնքան շատ եյին,
 Վոր հարյուր հոգի կրկտացնեյին.
 Յեվ քանի տեսակ անծանոթ բաներ,
 Ի՞նչ անուշեղեն, ի՞նչ տապականեր....
 Պառավմ ուտում եր մեծ ախորժակով
 Ու գինին դարտկում լիքը բաժակով,
 Վերջն ել մեղրահաց կերավ բավական,
 Վոր քաղցրացնե իր շրթունք ու բերան:
 Մերն այս տեսնելով՝ մնաց շփոթված,
 Ընկավ պառավի վոտքերն ու ասաց.
 «Բարով քեզ, բարով, ահեղ թագուհի,
 Քո մեծությունը հավիտյան լինի»:
 Այս խոսքից հետո կամաց շրշնջեց
 Ու փսփսալով պառավին հարցրեց.
 «Հիմա վոր բախտի վերին ծայրում ես,
 Խոմ բավական ես, ա կնիկ, ի՞նչ կասեսա...
 Թագուհի դառած պառավմ այս անգամ
 Մարդի յերեսին չընայեց անգամ.
 Հրաման մոմուց նա քթի տակին,
 Վոր դուրս վոնդեն մեր անկոչ հյուրին:
 Հենց վոր լսվեցավ թագուհու հրաման,
 Հնազանդ յերեվալ ամենքն ուղեցան.
 Մեծ մեծ իշխաններ, խաներ ու բեգեր,
 Ինչպես վորարդի արնախում շներ,
 Խփելով ծերի շլընքակոթին՝
 Շքեղ դահլիճից դուրս վոնդեցին.
 Շեմքումը կանգնած պահապաններն ել
 Իրանց կացիններն ելին պատրաստել,
 Վրա վազեցին ամենքը մեկեն,
 Ու քիչ մնաց վոր՝ խեղճին խողխողեն:
 Ինչպես վոր յեղավ, մի կերպ դուրս պրծավ,
 Դուրսն ել ամբոխի ծաղրի տակն ընկավ,
 Վոր կազմես նրան լիներ սպասում
 Անձրկի տակին՝ ցեխուտ փողոցում.
 — «Այ թե լավ արին, ծերուկ դու անգետ,
 Ում հետ ես մեկնում անձունի վոտներդ,
 Թող այդ քեզ համար լինի լավ իրատ,
 Վոր ել չըցանես մանդը կտավիատ...»



Այս գեղքից հետո շատ որեր չանցան,
 Պառավի այծերն ելի մոտ յեկան.
 Ուղարկում ե նա իր իշխաններին,
 Վոր գտնեն բերեն արտաքսած ծերին:
 Յեկավ ծերունին: Պառավն սկսեց.
 «Դու պետք ե գնաս ձկան մոտ, ասեց.
 Կերթաս խոր զլուխ կըտաս դու նրան
 Ու իմ փափազը կըհայտնես իրան.
 Կասեա՝ չեմ ուզում մնալ թագուհի,
 Ուզում եմ լինել ծովի տիրուհի.
 Ուզում եմ Ովկիան ծովումը կենալ,
 Վոսկե ձկնիկին ծառա ունենալ,
 Վոր իմ հրամանին միշտ պատրաստ լինի,
 Յեկ ինչ ուզենամ, իսկույն կատարիս...
 Պառավին լսեց ծերը լուռ ու մունջ,
 Առանց հայտնելու վորևե տրտունջ:
 Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց.
 (Այս անգամ ծովը խիստ եր փոթորկած,
 Փրփրած ալիքներ սարեր դառնալով՝
 Իրար են զարկվում ահեղ գոռալով).
 Վողբածայն կանչեց վոսկե ձկնիկին,
 Զուկը լողալով՝ մոտեցալ ծերին).



«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
 Ծերը զլուխ տվավ ու պատասխանեց.
 «Վողորմած լինես, Թագուհի Զնիկ,
 Իսպառ գժվել ե իմ պառավ կնիկ.
 Ի՞նչ անեմ արդյոք այդ նզովյալին,
 Մինչև յերբ տանջվեմ քավթառի ձեռին.
 Ել չի կամենում թագուհի լինել,
 Այլ տես անիծածն ինչ ե միտք արել.
 Իշխել ե ուզում բոլոր ջրերին
 Ու իշխանուհի դառնալ ծովային.
 Ուզում ե Ովկիան ծովումը կենալ,
 Վոսկե ձկանրդ ծառա ունենալ,
 Վոր իր հրամանին միշտ պատրաստ կենաս
 Ու ինչ ուզենա, շուտ կատարում տաս...»

Վոսկե ձկնիկը լուռ ու մունջ լսեց,
 Բայց ել ծերունուն չըպատասխանեց.
 Զրի յերեսին շրջմփից պոչով
 Ու անցավ, գնաց գեպի խորին ծով...
 Շատ մնաց ծերը և շատ նայեցավ,
 Բայց վոսկե ձկնիկն ել չերեվեցավ.
 Դարձավ գլխակոր, վոր հայտնե կընկան,
 Թե ինչ փորձանքի մեջ գցեց իրան...
 Յեկ գնաց, տեսավ... (բայց ի՞նչ տեսնի լավ,
 Վոր արդար լինի և վոչ անիրավ).
 Հին խուղի շեմքում պառավը նստած,
 Կոտրած տաշտակը առջեմն ընկած...)

1833 թ.



Ответств редактор *П. А. Чатынян*
Технич. редактор *Л. М. Жданович*
Корректор *С. Григорян*

Сдано в набор 29 ноября 1937 г.
подписано в печать 27 декабря 1937 г.
Формат 82x108/16. Обем 2 п. л. Ти-
раж 5000 экз. «полоблит С 6938. За-
каз № 2291. Типография армянского
областного издательства «Большевик»
(Ростов-Д., Ворошиловский пр., № 27)


ՀՀ Ազգային գրադարան



NL0391523

ЦЕНА 50 коп.

4872



А.С. ПУШКИН

СКАЗКА о РЫБАКЕ и РЫБКЕ

/ на армянском языке /

обложка и иллюстрации худ. Н. Филова

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ
АРМЯНСКОЕ ИЗ-ВО
„Большевик“
ГРОСТОВ “/донау
1937